



891.440
S-12





Հրատակութիւն „ՆԻԿՐ ՄԱՆՈՒԿԵՆԵՐԻՆ“ բնկ.
№ 30.

9
ՈԱԲԻՆԴՐԱՆԱՏ ՏԱԳՈՐ

891 445. Ա. 8

S-12

ՄԱՐԻԿԸ

Թարգմ. ռուս. Հ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

7067

Յաւելւած «ՀԱՍԿԵՐ» ամսագրի

○○○○○○○○

ԹԻՖԼԻՍ
Տպարան Ն. Աղանեանի, Պօլից. 7
1916

13 SEP 2013

29912

891.4905 Mengny J061
S-12 July 1988



Թարինդրանատ Տագոր

ՌԱԲԻՆԴՐԱՆԱՏ ՏԱԳՈՐ

Աշխարհահռչակ բանաստեղծ-մտածող էս
Հնդկացին հայրենիքում սրբի շարքն է դասւել,
սպակայն 50 տարեկան հասակում միայն յայտնի
եղաւ եւրոպացիներին, երբ 1913 թւին Անգլիա-
յում թարգմանւեց նրա «Գիտանջալի» ժողովա-
ծուն և մի քիչ յետոյ նա արժանացաւ Նոբելի
մրցանակին, որպէս առաջնակարգ բանաստեղծ:

Նա ծնւել է 1861 թւին Կալկաթայում բրահ-
մինական ընտանիքի մէջ. փոքր հասակից սկսում
է պիէսներ ու վէպեր գրել: 19 տարեկան ար-
դէն յայտնի է լինում իր՝ «գրւածքներով Հնդկաս-
տանում:

Երիտասարդ Տագորը մեկնում է Հօնդոն ի-
րաւաբան գիտութիւններ ուսանելու: Դառնալով
հայրենիք՝ մի երկու տարում մեծ անուն է հա-
նում էնտեղ. յետոյ կրկին մեկնում է եւրոպա,
ու էտպէս ճամփայ է բացում նրա համար Արե-
ւելքից Արևմուտք, Արևմուտքից Արեւելք: Նրա
երգերը, գլխաւորապէս «Գիտանջալի» և ապա
«Պարտիզանը», «Սաղհանան», «Մութ ննջարա-
նի արքան» և այլն՝ հնդիկ սուրբ գրքերից յետոյ
իրկրորդ տեղն են բռնում Հնդկաստանում:

Ինքը լինելով ինքնատիպ, հազւագիւտ ա-
րեւելցի անչափ սիրում է բնութիւնը և իր երկե-
րի մէջ մարգարտաշար երեւում են բնութեան բո-
լոր զարդերն ու իր պայծառ մտքերը միատեղ
հիւսւած:

Տագորն ապրում է մի աշխարհում, որ կոչում է ուրախութիւննրա համար վիշտ ու ցաւչըկայ, իսկ եթէ լինի էլ, դա նրաննոյնքան դուրեկան է, որքան և ուրախութիւնը:

Մանուկներին նա նորել է էս գիրքը՝ «Մահիկը», որտեղ դուք կը տեսնէք, թէ 3—4 տարեկան տղան ինչեր է խօսում իր մօր հետ, ինչ խելօք ու սրամիտ բաներ է մտածում:

Տագորը Բոլեպատում, որ գտնուում է իր ծննդավայրից ոչ հեռու, բացել է մանուկների համար դպրոց, որ զեկավարում է ինքը եւրոպական ձևով:

Իր բոլոր գրւածքները նա գրել է բենգալերէն և հիմա միայն, գրելուց 30—35 տարի յետոյ, երբ քաղաքակիրթ աշխարհի ընթերցող հասարակութիւնը յափշտակւած է նրա երկերով՝ Տագորը բհնգալերէնից իր գրւածքները թարգմանում է անգլիերէնի անգլիացի Վ. Հէյտս բանաստեղծի հետ, որպէսզի մարչելի լինի բոլոր լուսաւորւած ժողովուրդների համար կարդալ ու թարգմանել անգլիերէնից:

Այժմ Տագորն ապրում է իր հայրենիքում Հնդկաստանում, խաղաղ ու անվրդով կեանքով. ինքն անչափ բարի ու անկեղծ ու պարզ մարդ է, էտ երկում է նաև պատկերից:

Պատմում են, որ թէ Անգլիայում և թէ Հնդկաստանում փողոցում միշտ շրջապատւած է լինում՝ մանուկներով. այնքան է սիրում մանուկներին. Մինչդեռ ծանօթներն ու բարեկամները

պատկառանքով բարեկում են ու անցնում, երեխաները համարձակօրէն մեծ հրճւանքով մօտ են վազում էտ մեծ մարդուն, կախւում նրա երկար փեշերից ու սկսում են միասին խաղալ, իրենց մեծ ընկերոջ հետ... Այնքան է նա սիրելի մանուկներին:

Նրա հայրն էլ՝ Դեբենդրանատը յայտնի փիլիսոփայ է և կոչւում է Մագարիշի («Մեծ իմաստուն»). Եղբայրներից երկուսը նշանաւոր նկարիչներ են, յայտնի իրենց հնդկա-պարսկական մանրանկարչութեամբ, իսկ միւս եղբայրը նոյնպէս փիլիսոփայ է:

Հ. Թ.

Կ Ո Չ ՈՒՄ Ը

Երբ գոնգը*) տասն է զարկում, ես նեղ փողոցով դպրոց եմ գնում.

Եւ ամեն օր պատահում եմ մանրուք ծախողին, որ կանչում է.

—Ուլունքներ, փայլուն ուլունքներ: Նրան ոչինչ չի շտապեցնում, չունի նա որևէ պարտադիր ճամփայ, մի որոշ տեղ չունի՝ ուր շտապի և ոչ էլ պէտք է որոշ ժամին տուն վերադառնայ:

Այս, երանի մանրուք ծախող լինէի ու բոլոր օրերս փողոցում անց ացնէի ու կանչէի.

—Ուլունքներ, փայլուն ուլունքներ: Ժամը չորսին՝ Երբ դպրոցից տուն եմ գալիս՝

*) Գոնգը մի գլանաձև գործիք է որևէ բան ազդարարելու համար. ունի արևելեան ծագում—գործածական է գլխաւորապէս Հնդկաստանում ու Չինաստանում: Փողովրդին մի բան յայտարարելու համար փայտով զարկում են գոնգին ու հնչումէ զիլ, աղմկալի ձայնով, հսկայ զանգակինման: Հետաքրքրականն էն է, որ գոնգի ձայնը հետզհետէ մարում է ու յետոյ նորից ուժեղանում, նորից մեղմանում. էսպէս կրկնումէ ամեն մի զարկի ժամանակ միքանի անգամ Ծ. Թ.



այ էն դարպասից տեսնում եմ, թէ
ինչպէս է պարտիզպանը փորում գետինը:
Ինչ ուզում է, անում է իր բահով,
կեղտոտում է իր հազուստը փոշում, և ոչ
ոք նրան չի յանդիմանի, եթէ նա այրւի
արեկ տակ կամ թրջւի անձրեից:

Ա՛խ, երանի պարտիզպան լինէի,
փորէի ամբողջ օրը և ոչ ոք չը խան-
դարէր ինձ:

Երբ մութն ընկնում է՝ մայրիկը քնելու
է զրկում ինձ,

Իմ բաց պատուհացից տեսնում եմ, թէ
ինչպէս ետ ու առաջ է քայլում գիշերա-
պահը փողոցում:

Մութն է և ամայի փոքրիկ փողոցը
ու փողոցի լապտերը տնկւած է՝ կարծես
հսկայ լինի մի հատիկ կարմիր աչքը ճա-
կատին:

Քայլում է գիշերապահը՝ լապտերը
ձեռին, իր ստերն ետքից քարշ տալով, և
երբէք իր կեանքում չի պառկում քնելու:
Ա՛խ, երանի գիշերապահ լինէի, ամ-
բողջ գիշերը քայլէի փողոցում և իմ լապ-
տերով ստերները փախցնէի:

ՄԱՀԻԿՆԵՐԻ ԴՊՐՈՅԸԸ.

Երբ անձրեսաբեր ամպերը ողոտում են
երկնքում և յունիսի հեղեղներն են տե-
ղում,

Եւ արևելքի խոնաւ քամին սլանում է
դաշտերի երեսով, որ բամբուկների մէջ իր
պկուն ածի, —

այդ ժամանակ, յանկարծ չը գիտեմ որ-
տեղից, գուրս են ընկնում հազարաւոր ծա-
ղիկներ և ուրախ-ուրախ վազվզում ու պա-
րում կանաչի վրա:

Մայրիկ, չը գիտեմ ինչու՝ ինձ թւում է
թէ բոլոր ծաղիկները յաճախում են մի ինչ
որ ստորերկրեայ դպրոց:

Նրանք իրենց դասերը սերտում են
գոնփակ, իսկ եթէ ժամանակից առաջ ու-
զենան դուրս գան խաղալու—ուսուցիչը
նրանց անկիւն է կանգնեցնում:

Իսկ երբ գալիս են անձրեները—նրանց
համար արձակուրդ է սկսում:

Աղմկով իրար են զարնուում ճիւղերն
անտառում, տերեները սօսափում են գիտ

քամուց, մըրկաբեր ամպերը բարձրածայն
հսկայական ծափեր են զարկում և մանուկ
ծաղիկները դուրս են թռչում վարդագոյն,
սպիտակ ու դեղին զգեստներով:

Գիտես, մայրիկ, նրանց տունը էնտեղ
է, երկնքում, որտեղ աստղերն են:

Դու չես տեսել, թէ ինչպէս նրանք
բոլորը ձգտում են դէպի էնտեղ, Միթէ
դու չը գիտես թէ ինչու են նրանք էտպէս
շտապում:

Իհարկէ, ես հասկանում եմ թէ ուժն
են մեկնում իրենց ձեռները. նրանք էլ՝
ճիշտ էնպէս, ինչպէս և ես, իրենց մայրի-
կըն ունին:

ԱՄՊԵՐՆ ՈՒ ԱԼԻՔՆԵՐԸ

Մայրիկ, էնտեղ, վերը՝ ամպերի մէջ
ապրող մարդիկ ինձ ձայն տւին.

— «Մենք խաղում ենք վաղ առաւօտից՝
հէնց որ զարթնում ենք — մինչև էն ժամը,
երբ օրը վերջանում է:»

«Մենք խաղ ենք անում ոսկեզօծ արշա-
լոյսի հետ, խաղ ենք անում արծաթ լուս-
նակի հետ:»

Եւ ես հարցրի.

— Հապա ի՞նչպէս մագլցեմ ես ձեզ մօտ:
Եւ նրանք պատասխան տւին.

«Մօտեցիր երկրիս ծայրին, մեկնիր
ձեռներդ երկնքին ու քեզ կը բարձրացնեն
մեզ մօտ, ամպերի վրա:»

— Մայրիկը տանը ինձ սպասում է, ասի
ես, ի՞նչպէս թողնեմ նրան ու գամ ձեզ
մօտ:

Ժպտացին նրանք ու լողալով հեռա-
ցան: Բայց ես, մայրիկ, սրանից աւելի
լաւ խաղ գիտեմ:

Ես ամպ կը լինեմ, իսկ դու լուսնակ:
Ես քեզ երկու ձեռքով կը ծածկեմ և

մեր տան կապոյտ առաստաղը կը լինի կա-
պոյտ երկինքը:

Մարդիկ, որ լողում են ալիքներում,
ձայն տւին ինձ.

«Մենք երգում ենք առաւօտից մինչ
իրիկուն, մենք ձգտում ենք միշտ հեռու և
հեռու ու չըգիտենք թէ ինչի մօտով ենք ալա-
նում:»

Ես հարցըի.

—Բայց ես ի՞նչպէս միանամ ձեզ:
Նրանք պատասխան տւին ինձ.

—Մօտեցիր ափի հէնց ծայրին, կանգ-
նիր պինդ խուփ արած աշերով և ալիքնե-
րը քեզ կը տանեն:

Ես ասի.

—Մայրիկը միշտ ուզում է, որ իրի-
կունները ես տանը լինեմ. ի՞նչպէս նրան
թողնեմ:

Եւ նրանք ժպտացին ու շորորալով
սլացան հեռու:

Բայց ես շատ աւելի լաւ խաղ գիտեմ,
մայրիկ:

Ես ալիքներ կը լինեմ, իսկ դու օտար,
անծանօթ ափը:

Ես կը գլորւեմ հեռուից միշտ առաջ ու
առաջ մինչեւ որ դիպչեմ փռւեմ ծնկներիդ
ծիծաղելով:

Ու ոչ ոք աշխարհում չի իմանայ՝ թէ
որտեղ ենք ես ու դու գտնւում:

ԶԱՄՊԱԿԻ ԾԱՂԻԿԸ

Իսկ եթէ հանաքով ենթադրենք, որ ես չամպակի ծաղիկ եմդարձել բարձր ճիւղին, որ ծլել է ահա էն ծառի վրա, և քամու ժամանակ օրօրւում եմ ծիծաղից ու պար եմ գալի նորափթիթ տերեների վրա—կը ճանաչէիր ինձ, մայրիկ:

Դու կը հարցնէիր—«Մանկիկս, որտեղ ես, և ես կամացուկի ինքս ինձ կըծիծաղէի և ձայն ծպտուն չէի հանի:

Ես սուս ու փուս կը բացէի իմ թերթիկները ու կը սկսէի դիտել քեզ՝ աշխատելուդ ժամանակ:

Իսկ երբ, արդէն լողացած, խոնաւ մազերդ ուսերիդ թափած, դու անցնէիր չամպակի շւաքով դէպի փոքրիկ բակը, ուր դու աղօթում ես—դու կը զգայիր ծաղկի բուրմունք, բայց չէիր իմանայ, որ էտ բուրմունքը ինձնից է:

Իսկ երբ որ կէսօրւայ ճաշից յետոյ դու նստէիր պատուհանի մօտ Ռամեանան կարդալու և ծառի ստւերը ընկնէր քո մազերիդ ու ծնկներիդ վրա, ես իմ սեփական պստիկ շւաքը կը զցէի գրքիդ երեսին

Ճիշտ էն տեղի վրա, որ դու կարգում ես: Բայց կիմանայի՞ր դու, որ էն պստիկ շւաքը քո մանկիկինն է:

Իսկ երբ իրիկունը դու գոմը գնայիր՝ կովերի մօտ, վառած ճրագը ձեռքիդ, ես յանկարծ նորից կընկնէի գետին ու կըկին քո տղան կը լինէի և կըսկսէի խնդրել քեզ որ հեքեաթ պատմես ինձ:

—Ո՞րտեղ էիր դու, անպիտան տղայ: —Ես քեզ չեմ ասի, մայրիկ:

Ահա թէ ինչ կասէինք մենք միմեանց այն ժամանակ:

ՀԵՖԵԱԹԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԸ

Եթէ մարդիկ մի կերպ իմանան, թէ որտեղ է գտնւում իմ արքայական պալատը՝ նա կը հալւի օդում։

Սպիտակ արծաթից են նրա պատերը, իսկ կտուրը շողշողուն ոսկուց։

Եօթ գաւիթաւոր պալատումն է ապրում թագուհին ու նրա զլխին դրւած է մի թանկագին քար, որ եօթ թագաւորութեան բոլոր գանձերի արժեքի չափ գին ունի։

Բայց, մայրիկ, թող ականջիդ շամ, թէ որտեղ է կանգնած իմ էտ արքայական պալատը։

Նա մեր վերնատան պատշգամբի անկիւնումն է, էնտեղ, ուր գտնւում է ծաղկամանը տուլասի ծաղկով։

Թագուհին պառկած է ու քնած եօթն անանցանելի ծովերի հեռու եզերքին։

Եւ ոչ ոք աշխարհումս չի կարող գլունել նրան՝ բացի ինձնից։ Ոսկի ապարանցաներ ունի ձեռներին ու մարդարտէ օղեր են կախւած ականջներից, մազերն ա-

լեծածան վար են իջնում մինչև գետին։

Նա կը զարթնի, երբ ես իմ փայտը դիպցնեմ նրան և եթէ ծիծաղի՝ նրա շուրթերից թանկագին քարեր կը թափւեն։

Բայց թող ականջիդ շամ, մայրիկ, նա—այ էնտեղ է, մեր վերնատան պատշգամբի անկիւնում, որտեղ գտնւում է ծաղկամանը՝ տուլասի ծաղկով։

Երբ որ գետում լողանալուդ ժամանակը գայ, ելի՞ր էն պատշգամբը, որ վերնատանն է։

Ես նստած եմ անկիւնում, էնտեղ, ուր երկու պատերի ստւերները հանդիպում են իրար։

Կատւին միայն կը թողնեմ գայ ինձ հետ, որովհետեւ նա գիտէ թէ որտեղ է ապրում հեքեաթական սափրիչը։

Բայց թող շամ ականջիդ, մայրիկ, թէ որտեղ է ապրում հեքեաթական սափրիչը։

Նա ապրում է վերնատան պատշգամբի անկիւնում, որտեղ տուլասի ծաղկով ծաղկամանն է դրւած։

ԱՍՏՂԱԳԵՏԸ

Ես միայն ասի.

— Իրիկուները՝ երբ կլոր լուսինը խըճռձւում է մեր էն կաղամի ծառի ճիւղերի մէջ, միթէ ոչ ոք չի կարող նրան բռնել։
Բայց դէգէն*) ծիծաղեց ինձ վրա և ասաւ։

— Ա! պստիկ, դու շատ յիմար երեխայ ես, քեզ պէս յիմար երեխայ չեմ տեսել։ Լուսինը չափազանց հեռու է մեզնից և բնչպէս կարող է մէկն ու մէկը բռնել նրան։
Ես ասի։

— Դէղէ, որքան միամիտ ես ինքդ։ Երբ մայրիկը նայում է իր պատուհանից ցածու ժամանում մեզ՝ երբ մենք բակում խաղում ենք, միթէ դու կասես թէ նա հեռու է մեզնից։

Բայց դէգէն նորից պատասխանեց։

— Ինչ յիմար երեխայ ես։ Լսիր, ա պըստիկ, հապա որտեղ կարող ես էնքան մեծ ցանց գտնես՝ որ լուսինը բռնես։
Ես ասի։

*) Դէղէ կը նշանակէ մեծ եղբայր, աւագ։

— Մենք ուղղակի ձեռքերով կը բռնենք։ Բայց դէղէն ծիծաղեց և ասաւ.

— Դու շատ յիմար երեխայ չեմ տեսել։ Եթէ լուսինը մօտենար մեզ, դու կը տեսնէիր, թէ ինչքան մեծ է նա։

Ես ասի.

— Ի՞նչ յիմար բաներ են սովորեցնում ձեր դպրոցում, դէղէ։ Ասա, երբ մայրիկը կուցնում է զլուկը մեզ համբուրելու համար, միթէ նրա դէմքը մեծ է երեսում։

Բայց և այնպէս դէղէն ասաւ.

— Ի՞նչ յիմար երեխայ ես։

ԿԱՐԵԿՑՈՒԹԻՒՆ

Մայրիկ, սիրելիս, եթէ ես ոչ քո տը-
ղան, այլ էն փոքրիկ շնիկը լինէի և հա-
մարձակւէի քո ափսէից բան վերցնել՝ դու
ինձ կասէի՞ր «չէ:»

Կը հեռացնէի՞ր ինձ ասելով՝

«Դուքս կորի, անպիտան շնիկ:»

Դէ, որ էտպէս է, թող ինձ, մայրիկ,
թող: Ես էլ երբէք չեմ գայ քեզ մօտ, երբ
ինձ կանչես, և երբէք չեմ թողնի, որ դու
ինձ կերակրես:

Մայրիկ, սիրելիս, եթէ ոչ քո տղան,
այլ էն փոքրիկ կանաչ թութակը լինէի,
միթէ դու ինձ շղթայած կը պահէիր, որ
չը կարողանայի թոչել:

Զեռքով կը սպանայի՞ր ինձ ասելով՝
«Ի՞նչ ապերախտ թոչուն է: Գիշեր-ցե-
րեկ կացահարում է ու փչացնում իր շըդ-
թան:

Դէ, որ էտպէս է, թող ինձ, մայրիկ,
թող: Ես կը փախչեմ անտառը և էլ երբէք
չեմ թողնի, որ ինձ գրկես:

ԹՂԹԵ ՆԱԽԱԿՆԵՐԸ

Օր օրի վրա, մէկը միւսի ետևից բաց
եմ թողնում ես իմ թղթէ նաւակները սը-
րընթաց գետակի հոսանքով:

Նրանց վրա սև տառերով գրում եմ իմ
անունը և էն գիւղի՝ ուր ես ապրում եմ:

Յուսով եմ, որ հեռու օտար աշխար-
հում մէկը կը գտնի նրանց և կիմանայ ով
եմ ես:

Իմ փոքրիկ նաւակները ես բար-
ձում եմ մեր պարտիզի շիուլի ծաղկով և
յուսով եմ՝ էս լուսաբացի ծաղիկները մի
տեղ ափ կը հանւեն:

Ես բաց եմ թողնում իմ թղթէ նաւակ-
ները, գարձնում հայեացքը երկնքին ու
տեսնում եմ, թէ ինչպէս մանը ամպերը
պարզել են իրենց ճերմակ ուռած առա-
գաստները:

Ես չը գիտեմ, թէ ով է էն երկնքի
իմ խաղընկերը, որ բաց է թողնում նը-
րանց եթերում՝ իմ նաւակների հետ ար-
շաւելով մըցելու համար:

Երբ իջնում է գիշերը, ես ծածկում եմ
իմ երեսը ձեռքերով ու տեսնում եմ ե-

բազի մէջ, թէ ինչպէս են իմ թղթէ նաւակները լողում միշտ առաջ և առաջ գիշերւայ աստղերի տակ:

Նրանցով լողում են երազների փէրիները ու նրանց ըեռը երազներով լիքը զամբիւղներն են:

ՆԱՒԱԾԻՆ

Նաւավար Մադխուի նաւը կապւած է Ռայջունի նաւահանգստի մօտ:

Նա վաղուց ի վեր անգործ կանգնած է էնտեղ՝ կանեփը բարձած:

Եթէ միայն նա իր նաւը նւիրէր ինձ, ես հարիւր թիակ կը յարմարեցնէի նրան ու կը պարզէի առազաստները՝ հինգ, վեց կամ եօթը առազաստ:

Եւ ես երբէք նրան չէի ուղղի դէպի անմիտ շուկաները:

Ես կը լողայի հեքեաթ աշխարհի եօթը ծովերով ու տասներեք գետերով:

Բայց դու, մայրիկ, չը պիտի նստես անկիւնում ու ողբաս ինձ համար:

Ես հերոս Ռամաջանդրի պէս չեմ գընում անտառը, որ տասնչորս տարուց յետոյ միայն վերադառնամ:

Ես կը լինեմ հեքեաթի արքայազունը և կը բարձեմ նաւիս ինչ որ ուզեմ:

Ես իմ ընկեր Աշուին հետս կը տանեմ: Ու մենք միասին ուրախ կը լողանք

հեքեաթ աշխարհի եօթը ծովերով ու տաս-
ներեք գետերով:

Վաղ արշալոյսին մենք առագաստները
կը բանանք:

Իսկ երբ կէսօրին դու լճակում լողա-
նալիս կը լինես՝ մենք ուրիշ թագաւորի
աշխարհում կը լինենք:

Մենք անցած կը լինենք Տիրպուրնի ծոցը,
իսկ Տեպանտարի անապատը մեր ետևը կը
թողնենք:

Իսկ երբ որ մենք վերագառնանք՝ ար-
դէն մութը կը լինի և ես, մայրիկ, քեզ կը
պատմեմ ամեն բան, ինչ որ տեսել ենք:

Ես նաւով կ'անցնեմ հեքեաթ աշխար-
հի եօթը ծովերով ու տասներեք գետերով:

Ա Ւ Ա Գ Ը

Ախ, ինչ յիմար է քո փոքրիկ աղջիկը,
մայրիկ: Նա էնպէս անմիտ երեխայութիւն-
ներ է անում:

Նա մինչև անգամ աստղերը չի զա-
նազանում փողոցի ճրագներից:

Երբ մենք սուտ ճաշ ենք խաղում
քարերով, նա կարծում է թէ իսկական
կերակուր է ու բերանն է առնում՝ որ
ուտի:

Երբ ես բաց եմ անում նրա առաջ
գիրքը և խնդրում եմ, որ այբուբեն սո-
վորի, նա պատուաւմ է ձեռներով թեր-
թերն ու չես իմանում ինչու համար ճը-
չում է ուրախութիւնից:

Ահա ինչպէս է քո մանուկը դասեր
սովորում:

Երբ ես բարկանում եմ նրա վրա,
յանդիմանելով թափահարում եմ գլուխս և
նախապում եմ, «անպիտան աղջիկ» եմ ա-
սում, նա ծիծաղում է կարծելով թէ գա-
շատ զւարճալի է:

Բոլորը գիտեն, որ հայրիկը գնացել է,
բայց երբ ես խաղի ժամանակ բարձր «հայ-

րիկ» եմ կանչում, նա շփոթւած դէս ու
դէն է նայում՝ կարծելով թէ հայրիկը այս-
տեղ է:

Երբ մեր լւացարարը իշուկներ է քե-
րում մեր սպիտակեղէնը տանելու համար,
և ես սկսում եմ խաղալ նրանց հետ ու
հաւատացնում եմ փոքրիկ աղջկադ, թէ ես
իր ուսուցիչն եմ — նա չը գիտեմ ինչու
սկսում է գոռալ ու «գէգէ» կանչել:

Թո պստիկ աղջիկը ուզում է լուսինը
բռնել:

Ի՞նչ ծիծաղելի է: Նա կանչում է «Գա-
նէշա, Գանէշա*):»

Թո փոքրիկ աղջիկը, մայրիկ, ճիշտ որ
յիմար է:

Նա էնպէս անմիտ երեխայութիւններ
է անում:

*) Գանէշա յատուկ անուն է Հնդկաստանում,
միւնոյն ժամանակ իմաստութեան, գիտութեան
աստւած՝ մեծ յարգանք վայելող:

ՓՈՖՐԻԿ ՏՂԱՄԱՐԴԸ

Ես փոքրիկ եմ — որովհետեւ զեռ երե-
խայ եմ: Ես տղամարդ կը լինեմ՝ երբ հայ-
րիկի չափ մեծանամ:

Երբ իմ ուսուցիչը գայ և ասի. «Ար-
դէն ուշ է, գնա բեր քո քարետախտակն
ու զբքերը:»

Ես նրան կը պատասխանեմ՝ «Միթէ
դուք չըգիտէք, որ ես հիմա նոյնպէս մեծ-
եմ, ինչպէս հայրիկը: Հիմա էլ ինձ պէտք
չեն դասերը:»

Եւ ուսուցիչը կը զարմանայ ասելով.
«Այժմ նա կարող է, եթէ ուզում է թող-
նել իր զբքերը. չէ՞ որ նա հիմա արդէն
մեծ է:»

Ես կը հագնւեմ որ գնամ շուկայ՝ որ-
տեղ ահագին ամբոխ է լինում:

Հօրեղբայրս մօտ կը վազի ու կասի
ինձ. «Դու կը կորչես, տղաս, թող քեզ
խտանեմ:»

Եւ ես կը պատասխանեմ. «Միթէ,
հօրեղբայր, դու չես տեսնում, որ ես նոյն-

պէս մեծ եմ, ինչպէս և հայրիկը։ Ես հիմա
մենակ կերթամ շուկայ։»

Ու հօրեղբայրս կասի՝ «Այո, նա հիմա
կարող է մենակ գնալ ուր ուզում է. չէ՞
որ նա հիմա արդէն մեծ է։»

Մայրիկը կը վերադառնայ լողարանից
հէնց էն ժամանակ, երբ ես դայեակին փող
տալիս կը լինեմ, որովհետեւ ես արդէն կ'ի-
մանամ, թէ ինչպէս է բացւում դրամարկղը
իր բանալիով։

Մայրիկը կասի, «Ի՞նչ ես անում, ան-
պիտան տղայ։»

Ես նրան կասեմ, «Մայրիկ, մի՞թէ դու
չը գիտես, որ հիմա նոյնպէս մեծ եմ, ինչ-
պէս հայրիկը, և իմ դայեակին ինքս պէտք
է փող վճարեմ։»

Ու մայրիկը կասի. «Նա հիմա ում ու-
զում է կարող է փող տալ. չէ՞ որ նա հի-
մա արդէն մեծ է։»

Հոկտեմբերի տօներին հայրիկը տուն
կը վերադառնայ ու, կարծելով թէ ես դեռ
երեխայ եմ՝ քաղաքից ինձ համար փոքրիկ
մաշիկներ ու մետաքսէ շորեր կը բերի։

Ես կասեմ, «Հայրիկ, դրանք դէդէին
տուր, չէ՞ որ հիմա ես նոյնպէս մեծ եմ
ինչպէս և դու։»

Հայրիկը կը մտածի ու կասի. «Եթէ
էտպէս է, դէ թող ինքը հիմա իր համար
հագուստ առնի. չէ՞ որ նա հիմա արդէն
մեծ է։»



ՎԱՀԱՐԱՎԱՆԸ

Մայրիկ, երեակայիր, որ դու մնացել
ես տանը, իսկ ես ճամփորդում եմ օտար
աշխարհներ:

Երեակայիր, որ նաւահանգստի մօտ
կանգնած է արդէն՝ պատրաստ և ծանրա-
բեռնաւած իմ նաւը:

Ուրեմն նախ քան որոշես, լաւ մըտա-
ծիր, մայրիկ, թէ ինչ բերեմ քեզ համար:

Մայրիկ, գուցէ դու ոսկի՞ ես ուզում,
շատ, շատ ոսկի:

Էնտեղ ոսկի գետերի ափերին արտեր
են փռւած՝ ոսկէ հասկերով ծածկւած։ Իսկ
անտառի ստւերախիտ ճամփին թափթփւած
են սոկի չամպակներ։

Կը հաւաքեմ քեզ համար բոլորը հա-
րիւրաւոր զամբիւղների մէջ։

Մայրիկ, գուցէ դու մարգարիտ ես
ուզում, աշնան անձրեկի կաթիլների մեծու-
թեամբ մարգարիտ։

Ես նաւով կը մօտենամ մարգարտէ
կղզու ափին։ Էնտեղ՝ ելնող արեկի շողերին
մարգարիտներ են դողդողում դաշտի ծա-

զիկների վրա, մարդարիտներ են թափւում
խոտերի վրա, մարդարիտներ են շաղ տա-
լիս ծովի ալիքները աւագին:

Եղբօրս համար մի զոյգ թևաւոր ձի
կը բերեմ. նրանցով նա կը թռչի ամպերի
մէջ:

Հայրիկին՝ կախարդական ինքնագիր
գրիչ, և հայրիկը չի նկատի, որ գրիչն ին-
քըն է գրում:

Իսկ քեզ համար, մայրիկ, մի արկղ
պիտի բերեմ լիքը թանկագին իրերով, որ
եօթ թագաւորի եօթ թագաւորութեանն
արժէ:

ՄԻՒՍ ԱՓԸ

Ես ուզում եմ անցնել դիմացի ափը,
որտեղ եղեգների ձողերից կապած եր-
կար շարքով շարւած են մակոյկները,
ուր առաւօտները մարդիկ էս ափից
անցնում են իրենց նաւակներով՝ արօրն
ուսերին ու գնում են իրենց հեռաւոր ար-
տերը,

Որտեղ հովիւները ստիպում են իրենց
բառաչող նախիրներին լող տալով անցնել
գետափնեայ արօտները,

Որտեղից նրանք բոլորը վերադառնում
են իրիկնադէմին,

Թողնելով որ շաղկալները ոռնան կըդ-
գու վրա անպէտք խոտերի միջից:

Եթէ դու կը թողնես, մայրիկ, երբ ես
մեծանամ, լաստավար կը դառնամ գետա-
փին:

Ասում են՝ թէ էն բարձր ափի ետևում
տարօրինակ լճակներ են թագնւած,

ուր անձրեներից յետոյ բաղերը երամ
ըեամ հաւաքւում են և ուր ափերին խիտ ե-

զէզն է բանում և ջրային թռչունները
իրենց ձւաներն են ածում,

որտեղ կացարները անհանգիստ պոչե-
րով իրենց տոտիկների հետքն են թռղնում
փափուկ մաքուր կաւի վրա,

որտեղ իրիկնադէմին բարձր սէղերը
սպիտակ ծաղիկներով պասկւած կանչում են
լուսնի շողերին ալիքների հետ խաղալու:

Եթէ դու կը թռղնես, մայրիկ, երբ ես
մեծանամ, լաստավար կը դառնամ գետա-
փին:

Ես կերթամ կը գամ՝ մի ափից միւսը
և գիւղի բոլոր տղաներն ու աղջիկները
ինձ կը նախանձեն՝ լողանալիս:

Իսկ երբ արել հասնի երկնքի մէջտեղին
և առաւօտը կէսօր դառնայ, ես քեզ մօտ
կը գամ ու կասեմ—«Մայրիկ, սոված եմ.»

Եւ երբ որ օրը վերջանալիս լինի ու
ստեղները ծառերի տակ թաք կենան՝ ես
քեզ մօտ կը գամ մթնշաղին:

Ես երբէք չեմ հեռանայ քեզնից ու
քաղաք չեմ գնայ աշխատելու հայրիկի պէս:

Եթէ դու կը թռղնես, մայրիկ, երբ ես
մեծանամ, լաստավար կը դառնամ գետա-
փին:

ՀԵՖԵԱԹԱԿԱՆ ԱՆԱՊԱՏԸ

Մայրիկ, երկինքը մթնեց. ես չը գի-
տեմ ժամը քանիսն է:

Ել խաղերն ինձ չեն զբաղեցնում և
ահա ես եկել եմ քեզ մօտ: Էսօր շաբաթ՝
մեր տօնն է:

Թոնդ գործդ, մայրիկ, նստիր այ էս-
տեղ՝ լուսամուտի մօտ ու պատմիր ինձ թէ
որտեղ է Տեպանտար հեքեաթական անա-
պատը:

Անձեների ստւերը ծածկել է օրը ա-
ռաւօտից մինչև իրիկուն:

Զար կայծակը իր ճանկերով չանկը-
ուում է երկինքը:

Երբ երկինքը մոնչում է և ամպը գո-
ռում, ես սիրում եմ հոգուս խորքում վա-
խենալ ու կպչել քեզ:

Երբ ծանր անձրել ժամերով թխթխկա-
ցընում է բամբուկի տերեները և մեր պա-
տուհանները դողում են ու չըխկ-չըխկում
քամուց, ես սիրում եմ, մայրիկ, քո կող-
քին մենակ նստել սենեակում և լսել, թէ
ինչպէս ես պատմում Տեպանտար հեքեա-
թական անապատի մասին:

Ո՞րտեղ էնա, մայրիկ, ո՞ր ծովի ափին,
ո՞ր սարի փեշին, ո՞ր թագաւորի աշխարհում:

Չը կայ էն անապատում ցանկապատ,
որ արտերը բաժանէր, չը կայ մի ճամփայ,
որով գիւղացիները իրիկունը իրենց գիւղը
վերադառնային կամ որով անտառում չոր
ցախ հաւաքող կինը իր բեռը շուկան տա-
նէր:

Միայն մի երկու տեղ՝ աւազի վրա
գեղին խոտ է երեսում ու մի հատիկ ծառ,
որի ճիւղերին մի զոյգ իմաստուն թռչուն-
ներ իրենց համար բուն են հիւսել—Տե-
պանտար անապատում:

Ես կարող եմ իմ մտքում պատկերա-
ցընել, թէ ինչպէս հէնց էսօրւայ նման մի
ամպոտ օր ջահէլ արքայազունը գորշ ձի հե-
ծած անցնում է մենակ անապատով թա-
գուհուն գտնելու համար, որ էնտեղ՝ ան-
տեսանելի լճի միւս կողմում, բանտարկւած
է հսկայի ամրոցի մէջ:

Երբ հեռու երկինքը ծածկւում է խո-
նաւ մառախուղով ու կայծակը փայլատա-
կում է յանկարծակի ցաւի պէս—ասա, մայ-
րիկ, արքայազունը յիշում է իր դըժքախտ

մօրը, որին թողել է թագաւորը և որը
մաքրում է գոմն ու սրբում աչքերը,—
յիշում է նրան, երբ ինքն անցնում է ձիով
Տեպանտար հեքեաթական անապատով:

Տես, մայրիկ, կարծես բոլորովին մըթ-
նեց՝ թէև օրը դեռ չի վերջացել և էնտեղ,
էն գիւղի ճամփին, էլ ճամփորդներ չը կան:

Հովիւր վաղ վերադարձաւ արօտից ու
մարդիկ թողել են իրենց արտերը՝ որ խըր-
ճիթների յարկի տակ խսիրի վրա նստեն
ու դիտեն սեակնած ամպերը:

Մայրիկ, գրքերս ես թողի դարակի
վրա—մի խնդրի, որ ես դասերը պատրաս-
տեմ:

Երբ ես մեծանամ ու հայրիկի պէս
մեծ լինեմ, ամեն բան, ինչ որ պէտք է
սովորել՝ ես կը սովորեմ:

Իսկ էսօր, մայրիկ, պատմիր ինձ, թէ
որտեղ է Տեպանտար հեքեաթական ան-
պատը:

ԺԱՄԸ ՏԱՄՆԵՐԿՈՒՄԸ

Մայրիկ, էսօր ես ուզում եմ թողնել
դասերս:

Զէ՝ որ ամբողջ առաւօտն անց եմ կա-
ցըրել դաս սովորելով:

Դու ասում ես, որ հիմա ժամը միայն
տասներկուսն է: Ենթագրենք, որ հէնց էտ-
պէս է. բայց միթէ չի կարելի ենթագրել,
որ արդէն ճաշից յետոյ է, թէկուզ և հիմա
ժամը տասներկուսը միայն լինի:

Ես հեշտութեամբ կարող եմ ենթագր-
ըրել, որ արեն արդէն հասել է բընձի այ
էն արտի ծայրը ու պառաւ ձկնորսուհին
լճակի ափին խոտեր է հաւաքում իր ընթ-
րիքի համար:

Ես կարող եմ խուփ անել աչքերս ու
մտածել, որ ստւերները մադարի*) ծառի
տակ խտանում են ու խտանում, իսկ լճակի
ջուրը սեացել է ու փայլում է:

Եթէ գիշերն էլ է լինում ժամը տաս-
ներկուսը, բա ի՞նչու հիմա ժամը տասներ-
կուսին չի կարող գիշեր դառնալ:

*) Տորոնի ծառ:

ՉԱՐ ՆԱՄԱԿԱԲԵՐԸ

Ի՞նչու ես նստել էստեղ՝ յատակի վրա,
մայրիկ ջան, էտպէս հանգիստ ու լուռ:

Անձրկը բաց պատուհանից ներս է
թափւում և դու ամբողջովին թրջւած ես
—բայց դու էտ չես նկատում:

Լսո՞ւմ ես, գոնզը ժամը չորսը խփեց:
Եղբօրս դպրոցից տուն գալու ժամանակն է:

Ի՞նչ է պատահել քեզ, ի՞նչու դու էսօր
ուրիշ տեսակ ես:

Դու էսօր հայրիկից նամակ չես ըս-
տացել:

Ես տեսայ ինչպէս նամակաբերը իր
պայուսակով համարեա բոլորի համար նա-
մակ բերեց:

Միայն հայրիկի նամակներն է պահում
իր մօտ, որ ինքը կարդայ: Ես հաւատա-
ցած եմ, որ նամակաբերը — չար մարդ է:

Բայց դրա համար մի տիրի, մայրիկ
ջան:

Եգուց հարեան գիւղում շուկայի օր է:
Խնդրիր որ աղախինը քեզ համար թուղթ
ու գըիչ առնի:

Ես ինքս կը գրեմ հայրիկի բոլոր նա-

մակները. դու նրանց մէջ ոչ մի սխալ չես
գտնի:

Ես կը գրեմ Ա-ից ճիշտ մինչև կ:

Բայց ինչո՞ւ ես ժպտում, մայրիկ:

Դու չես հաւատում, որ ես կարող եմ
հայրիկի պէս գեղեցիկ գրել:

Ես թղթիս վրա զգոյշ գծեր կը քաշեմ
քանոնով և գեղեցիկ ու խոշոր կ'արտագը-
րեմ բոլոր տառերը:

Իսկ երբ վերջացնեմ նամակս, դու
չը կարծես թէ ես հայրիկի պէս յիմար կը
լինեմ, որ նամակս էն զգւելի նամակաբերի
պայուսակը ձգեմ:

Ես նրան չեմ սպասի. նամակը կը յան-
ձընեմ քեզ ինքս և տառ առ տառ կօգնեմ
քեզ որ կարդաս:

Ես գիտեմ, որ նամակաբերը չի սի-
րում քեզ ուրախ նամակներ տալ:

Հ Ե Ր Ո Ս Ը

Մայրիկ, եկ երկակայենք, որ մենք
ճամփորդում ենք ու անցնում մի անապատ,
վտանգաւոր աշխարհով:

Դու գնում ես պատգարակով, իսկ ես
քո կողքից ցատկուում եմ ձիով:

Արդէն երեկոյ է և արել մայր է մըտ-
նում: Մեր առաջ տխուր ու գորշ փուած
է Զորագիգի անապատը: Զորս կողմը գետի-
նը տկլոր է ու դատարկ:

Դու վախենում ես ու մտածում. «Ես
չը գիտեմ՝ էս ուր ենք եկել:»

Իսկ ես քեզ ասում եմ:

— Մայրիկ, մի վախի:»

Ամբողջ դաշտը ծածկւած է փշերով
ու կոշտ խոտերով և միջովն անցնում է
միայն մի նեղ, ծուռ ու մուռ արանետ:

Նախիրները չեն երեսում. նըանք բո-
լորն արդէն գնացել են իրենց գիւղի գոմերը:

Թուխան աւելի թանձրանում ու ծած-
կում է գետինն ու երկինքը և մենք էլ
չենք կարողանում ջոկել թէ ուր ենք գնում:

Յանկարծ դու ինձ կանչում ես ու
շշնջալով հարցնում՝
—ինչ լոյսէ, այ էնտեղ, ափի մօտ:

Մէկ էլ սոսկալի ձայն է լսւում և ամեն
կողմից մեզ վրա են յարձակւում ինչ որ
կերպարանքներ:

Դու կուչ եկած նստած ես քո պատ-
գարակիդ վրա և աղօթքիդ մէջ աստւած-
ներին ես կանչում:

Պատգարակ կըողները ահից դողալով
թագնւում են փշոտ թփերի մէջ:

Ես ձայն եմ տալիս քեզ.

—Զը վախես, մայրիկ, ես էնտեղ եմ:

Երկար փայտերը ձեռներին և վայրե-
նի մազերը գզզած՝ նրանք աւելի ու ա-
ւելի են մեղ մօտենում:

Ես գոռում եմ. «Զգնյշ, չարագործ-
ներ: Էլի մի քայլ, ու դուք մեռած էք:»

Նրանք նորից մի զարհուրելի ձայն են
հանում ու առաջ են ընկնում:

Դու բռնում ես ձեռքից ու ասում.
«Միրելի տղաս, երկնքի սիրուն, նրանց մի
մօտենայ:»

Ես ասում եմ.
—Մայրիկ, դու միայն տես թէ ես
ոնց եմ նրանց դատաստանն անում:»

Ես ասպանդակում եմ ձիուս, նա քա-
ռատրոփի է անում և վահաններն ու նիզակ-
ները շաշումով իրար են դիպչում:

Կոփւը դառնում է աւելի ու աւելի
սոսկալի ու կատաղի և դու, մայրիկ, եթէ
տեսնէիր քո պատգարակից էտ կոփւը՝ սար-
սուռ կը զգայիր:

Բայց ահա թշնամիների մի մասը
փախչում է, իսկ մեծ մասը կտոր կտոր
եղած փուած է գետնին:

Ես գիտեմ, դու նստած ես մենակ ու
կարծում ես, թէ էտ ժամանակ քո տղան
անկասկած արդէն սպանւած է:

Բայց ես արինոստ շորերով գալիս եմ
քեզ մօտ և ասում. «Մայրիկ, կոփւը վեր-
ջացած է:»

Դու պատգարակից դուրս ես գալիս,
համբուրում ես ինձ ու սեղմելով կըծքիդ
շշնջում ես քեզ ու քեզ.

—Ի՞նչ պիտի անէի, եթէ իմ տղան
ինձ չուղեկցէր:

Օրէցօր հազար ու մի անպէտք բաներ
են պատահում, ինչու և մի էսպիսի դէպք
չի կարող իսկապէս պատահել:

Դա նման եք միւսու ռուս Արքեաթին:
Հայուսն չառչու ։ Ո՞՛չ չառչու ։ Հայուսն չառչու
է, իսկ ես կարծում եի, թէ դու վախիւի
մեծացած ես».

Իսկ մեր բոլոր համագիւղացիները կը
զարմանային ու կասէին. «Ճիշտ որ, Ե՞նչ
բախտաւորութիւն է», որ աղան ուղեկցելիս
է եղել մօրը»

Գ Ր Ո Ղ Ը

Դու ասում ես, որ հայրիկը շատ գըր-
ուել է սբում: Բայց ի՞նչ ո՞յ նա սբում է—
Ես չեմ չառչանում,

Նա ողջ երեկոյ կարդաց քեզ համար,
ըայց միթէ դու իսկապէս հասկացար, ին-
չի մասին էր խօսում հայրիկը:

Դու շատ սիրուն հեքեաթներ ես մեզ
պատմում, ինչու, մայրիկ, հայրիկը չի
կարողանում էտպիսի հեքեաթներ զրել:

Ծիրէ նա երբէք ի՞ն մօրեա ի՞ն մօրէն նի-
քեաթներ հսկաների, վէրիների ու թագու-
նիների մասին:

Միթէ էտ բոլորը նա մոռացել է:

Ցաճախ, երբ նա ուշանում է լողարան
գնալու, դու ստիգւած ես լինում գնալ և
հարիւր անգամ յիշեցնել, կանչել նրան:

Դու կերակուրը տաք ես պահում ըս-
պասելով նրան, իսկ նա միշտ մոռանում
է ու շարունակում է գրել:

Հայրիկը միշտ գիրք գրել է խաղում:

Եթէ ես երբ և իցէ ուղում եմ հայ-
րիկի սենեակում խաղալ, դու գալիս ես ու

կանչում,ինձ «ի՞նչ անհնագանդ երեխայ է»:

Եթէ մի փոքր աղմուկ եմ հանում, դու
ասում ես. «Չես տեսնում, որ հայրիկը պա-
րապում է»:

Ի՞նչ հաճոյք է նստել ու միշտ դժել
հա գըել:

Երբ ես հայրիկի գրիչը կամ մատիտը
վերցնում եմ ու սկսում եմ գըել նրա գրքի
վրա ճիշտ հայրիկի նման ա,թ, գ, դ, ե...,
ինչնեւ ես, մայրիկ, դու էտպէս ինձ վրա
բարկանում:

Իսկ դու ոչ մի խօսք չես ասում, երբ
հայրիկն է գըում:

Հայրիկն էնքան թուղթ է փչացնում,
իսկ դու իբր թէ էտ չես նկատում:

Բայց երբ ես վերցնում եմ մի թերթ,
որ ինձ համար նաւակ շինեմ, դու բարկա-
նում ես, և ասում՝ «Ա՛խ, ինչ զահլատար ե-
րեխայ է»:

Բա ինչնեւ ոչինչ չես ասում, երբ
հայրիկն է թերթը թերթի ետևից փչացը-
նում, մըոտելով նրանց երկու երեսն էլ
ու նշաններով:

ՀՀ Ազգային գրադարան



NL0390444

2414

